



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

21.294

33 -
C-91

Շ. Ա. 2010/2

5 № Գրադարան «Կեսանք»-ի № 5

Ի. ՇՏԷՐՆ


ՄԱՐԿՍԻ

ՅԱԻԵԼԵԱԼ ԱՐԺԷՔԻ

ԹԷՕՐԻԱՆ

Գ Ի Ն Ն Է Ծ Կ Ո Պ .

Ռուսերենից թարգմ.
Ս. Ղ.



ԹԻՖԼԻՍ
Կենտրոնում սպառան ընկ. «ՀՆՐԱՒԱ» Մադաթեան փող. № 5.
1906 168

ԱՐՄ.

2-1991

2-1991 ԳՐԱՆ. ԴՈՒ. 27

5 № Գրադարան «Կենտրոն»-ի № 5

33

05 FEB 2007

Շ-91

Ի. Հ Տ Է Ր Ն

ՄԱՐԻՍԻ

ՅԱԻԵԼԵԱԼ ԱՐԺԷՔԻ

ԹԷՕՐԻԱՆ

Ռուսերենից թարգմ.

Ս. Ղ.

ԿՈՅ. № 22490

ԹԻՅԼԻՍ

Էլեկտրոնային գրադարանի զեկ. «ՀԵՐՄԷՍ» Մադաթեան փող. № 5.

1906

(168)

15 .07. 2013

21.294



40692-67

Ի. ՅՏԻՐՆ

ՅԱԻԵԼԵԱԼ ԱՐԺԷՔԻ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ.

1. Արժեքի տեսութեան խնդիրը:

Մարքսը՝ իր յաւելեալ արժեքի տեսութեան մէջ աշխատում է բացատրել, թէ՛ ինչ՞ով վարձու բանւորի աշխատանքի համար վճարում են ո՛չ իր լրիւ արժողութիւնը, այլ պակաս:

Իւրաքանչիւր աւարկայի, որ մտնում է տուր և առի մէջ, կամ իւրաքանչիւր ապրանքի համար վճարում են ապրանքի արժեքի համապատասխան. միևնոյն ժամանակ համաձայն յայտնի սօցիալ-անտեսական օրէնքների, որոնք նոյնքան իրական են և պարտադիր, որքան և բնութեան բնական օրէնքները: Ով որ ուզում է առնի հաց, ձուկ, կոշիկ, հագուստ, նա պէտք է այդ ապրանքների համար վճարէ նրանց արժեքի համապատասխան: Վարձու բանւորը ծախում է իր աշխատանքը (բանւորական ուժը) ձեռնարկու-ղրամատիրոջ ճիշտ այնպէս, ինչպէս ապրանք: Ինչի՞ցն է, որ այդ ապրանքը, բանւորի բանւորական ուժը, ընդհանուր կանոնից բացառութիւն է կազմում: Ինչ՞ով կապիտալիստը կարողանում է այդ ապրանքն առնել իր արժեքից պակաս գնով:

Ամեն մի աշխատանք դեռ ապրանք չէ: Գիւղացին ծախում է ո՛չ թէ իր աշխատանքը, այլ աշխատանքի արդիւնքը. նոյնն է անում և արհեստաւորը

և խոշոր արդիւնաբեր-գործարանատէրը: Ընդհակառակը վարձու բանւորը՝ ծախում է ոչ թէ իր աշխատանքի արդիւնքը, այլ բանւորական ուժը: Այդպէս է անում նաև ամեն մի ծառայող կամ պաշտօնեայ, սկսած ստորինից նոյն իսկ մինչև մինխաւորը, որը նոյնպէս վարձու բանւոր է, միայն այն տարբերութեամբ, որ նրա աշխատավարձը, կամ նրա ապրանքի արժէքը, այնքան ցածր չէ, որքան գործարանական աշխատաւորի վարձը: Ուրեմն, մենք գիտենք, որ բանւորը չի ստանում իր ծառայութիւնների լրիւ արժէքը: Սակայն ինչո՞ւ դա պէտք է հնարաւոր լինի: Արդեօք նոյն ինքը բնութիւնը չի՞ ստեղծում որ և է բացառիկ օրէնք, ինչպէս որ ստեղծում է մեր մարդկային հասարակութիւնը:

2. Ի՞նչ է արժէքը:

Վերոյիշեալ երևոյթի իսկական պատճառը բացատրելու համար՝ մենք պէտք է միզ համար նախ և առաջ պարզենք, թէ ի՞նչ ենք հասկանում արժէք ասելով:

Սերթուկը, կօշիկը, սիգարը արժէք ունին, կամ արժէքաւոր են ինձ համար, երբ որ ես նրանց գործ եմ ածում. ընդհակառակը, հեծանիւր (վելոսիպեդ) ինձ համար ոչ մի արժէք չունի, եթէ ես չեմ կարող կամ սովոր չեմ նրանով ման գալ: Բայց և այնպէս հեծանիւրը որոշ արժէք ունի յատկապէս՝ նրա համար, ով որ նրանով կարողանում է ման գալ: Այդպէս էլ աղբանոցում ալմազ գտնող քարաղաղի համար ալմազի հատիկը ոչ մի արժէք չունի և նա արհամարհանքով մի կողմն է շարտում: Ուստի, կարող է թւալ, որ արժէք են ունենում այն բոլոր առարկաները, որոնց կարելի է գործ ածել, կամ որոնք պիտանի են գործածութեան նպատակների համար: Սակայն բոլորս էլ գիտենք, որ օդը, օրինակի համար, չափից դուրս օգտակար բան է, որ

անհրաժեշտ է ամենքի համար, և սակայն մենք չենք ասիլ, որ օդն արժէքաւոր է, այսինքն ունի որոշ արժէք, որ կարելի լինէր փողով արտայայտել: Ինչո՞ւ համար: Որովհետև օդը, թէ և գործածութեան արժէք ունի, սակայն չի կարելի գնել: Ամեն մի մարդ ազատօրէն տիրում է և օգտւում է նրանից այն չափով, որ այլ ևս հարկաւորութիւն չի լինում մի ուրիշ տեղից աննելու (գնելու): Ընդհակառակը, հեծանիւրը, որը ես, օրինակի համար տարել եմ վիճակախաղում, կարող եմ ծախել, այսինքն՝ փոխել փողի հետ և այդ փողը կրկին փոխանակել այնպիսի առարկաների հետ, որոնք ինձ հարկաւոր են և պիտանի են գործածութեան համար: Յետոյ, ջրառատ երկրներում ջուրը, ինչպէս օդը, յայտնի արժէք չունի, որովհետև չի կարելի նրան այստեղ ոչ ծախել, ոչ էլ մի ուրիշ բանի հետ փոխանակել:

Այստեղից հետևում է, որ «արժէք» խօսքը կարելի է գործ ածել երկու նշանակութեամբ, նախ, մենք այդ խօսքով հասկանում ենք մի յայտնի առարկայի օգտակարութիւնը կամ պիտանիութիւնը. երկրորդ, իսկ եթէ մենք ասում ենք, թէ մի յայտնի առարկայ ունի որոշ և յայտնի արժէք, դրանով հասկանում ենք, որ նրան կարելի է փոխանակել ուրիշ առարկաների հետ: Այսպէս, ուրեմն, օդն ունի միայն գործածութեան արժէք, և չունի փոխանակական արժէք, իսկ սերթուկն, ընդհակառակն, ունի միաժամանակ և՛ գործածութեան, և՛ փոխանակական արժէք («փոխանակական» խօսքի տեղ կարելի է ասել «ապրանքային») արժէք):

Մի առարկայի որոշ, յայտնի արժէքը կամ նրա փոխանակական արժէքը (կամ գինը, եթէ արժէքն արտայայտւած է փողով) նշանակում է այն քանակական յարաբերութիւնը, որով գործածութեան որոշ առարկան կամ ապրանքը կարելի է փոխանակել գործածութեան ուրիշ զանազան առարկաների կամ ապրանքների հետ:

Օրինակ, երբ մենք ասում ենք, որ մի զոյգ կօշիկը արժէ 6 ուրբ., մի հատ վերարկուն՝ 18 ուրբ. մէկ շիշ գինին՝ 20 կոպ., այդ կը նշանակէ, որ դերձակն ստանում է կամ կարող է ստանալ մի վերարկուի փոխարէն երեք զոյգ կօշիկ, կամ 90 շիշ գինի, որ կօշկակարն ստանում է կամ կարող է ստանալ մի զոյգ կօշկի փոխարէն 30 շիշ գինի, բայց պէտք է երեք զոյգ կօշիկ տայ մի վերարկու ստանալու համար և վերջապէս, որ գինեվաճառը պէտք է 30 շիշ գինի տայ մի զոյգ կօշկի փոխարէն և 90 շիշ գինի՝ մի վերարկուի համար: Այսպէս ուրեմն, մենք արդէն գիտենք, թէ ի՞նչ է ապրանքների արժէքը: Այժմ մենք աւելի առաջ գընանք և հարց տանք՝

3. Ինչի՞ցն է, որ ապրանքները զանազան արժէք ունին:

Ի՞նչ է պատճառը, որ մի վերարկուն արժէնում է 18 ուրբի, մինչդեռ մի զոյգ կօշիկը միայն 6 ուրբ. և մի շիշ գինին՝ միայն 20 կոպ.:

Այս հարցին մենք պէտք է պատասխանենք այսպէս, ապրանքների փոխանակական արժէքը որոշում է բանւորական ժամանակի մեծութեամբ կամ քանակութեամբ, որն անհրաժեշտ է տւեալ ապրանքը պատրաստելու համար:

Օրինակ. եթէ տւեալ ապրանքը պատրաստելու համար անհրաժեշտ է մի բանւորական օր, այն ժամանակ այդ ապրանքը երկու անգամ աւելի թանգ կը լինի (երկու անգամ աւելի արժէք կունենայ), քան մի ուրիշ ապրանք, որը կարելի է պատրաստել կէս բանւորական օրում և ընդհակառակը, նա երկու անգամ աւելի էժան կը լինի, քան մի երրորդ ապրանք, որը

պատրաստելու համար անհրաժեշտ է գործ դնել երկու բանւորական օր:

Աշխատանքի իւրաքանչիւր արդիւնք է՝ այսպէս ասած. «խտացած», «բիւրեղացած» բանւորական ժամանակ և որքան շատ է խտացած բանւորական ժամանակը տւեալ առարկայի մէջ, այնքան էլ բարձր է նրա արժէքը փոխանակութեան մէջ, կամ այնքան բարձր է նրա բազարի գինը կամ փոխանակական արժէքը: Ուստի, վերև բերած մեր օրինակում վերարկուի, կօշկի ու գինու գների մէջ եղած տարբերութիւնը առաջ է գալիս նրանից, որ մի վերարկու պատրաստելու համար պահանջւում է երեք անգամ աւելի ժամանակ, քան թէ մի զոյգ կօշիկ պատրաստելու համար և 90 անգամ աւելի շատ ժամանակ, քան թէ մի շիշ գինի արդիւնաբերելու համար: Օգը չունի ապրանքային կամ փոխանակական արժէք. բնութեան մէջ ամենքի համար բաւականաչափ օդ կայ, ուստի կարիք չկայ մարդկային աշխատանք գործ դնել նրան պատրաստելու համար:

Նկատենք, որ այս դէպքում մեր խօսքը ոչ թէ տրւած պատրաստ նիւթից վերարկու պատրաստելու մասին է, այլ առհասարակ այն բոլոր աշխատանքների մասին, որոնք անհրաժեշտ են եղել կատարել՝ ձեռք բերելու համար համապատասխան հում նիւթ, պատրաստելու գործիքներ և հայթայթելու դրանց համար նիւթ, ուսումնասիրելու համապատասխան արհեստը և այլն: Միւս կողմից մինք այստեղ ի նկատի ունենք ոչ թէ այն բանւորական ժամանակը, որը գործադրել է մի յայտնի, շօշափելի բանւոր (այլապէս աւելի մեծ արժէք կունենար այն ապրանքը, որը պատրաստւած լինէր աւելի երկար ժամանակի ընթացքում և հետևապէս ամենարժէքաւոր ապրանքները կը լինէին ծոյլ և անչնորհ բանւորների ձեռքով պատրաստւածները),

ընդհակառակը, մենք այստեղ ի նկատի ունենք այն բանւորական ժամանակը, որ անհրաժեշտօրէն պէտք է գործ դնէ նօրմալ աշխատաւորը կուլտուրայի որոշ ընդհանուր յարաբերութիւնների միջոցին:

Վէրջապէս, չպէտք է կարծել, որ արժէքի կամ գնի որոշ յարաբերութիւնը սահմանում է որեւէ պետական հիմնարկութիւն կամ գաղտնի ընկերակցութիւն: Ընդհակառակը, արժէքի յարաբերութիւնները սահմանում են ինքնաբերաբար, «իրանք իրանց», պատճառօրին կախւած լինելով այն հաւաքական բանւորական ժամանակի քանակից, որն անհրաժեշտ է եղել գործադրելու յայտնի առարկաները պատրաստելու համար:

Արժէքի այդ օրէնքն առաջին անգամ սահմանեց անգլիական տնտեսագէտ Ռիկարդոն (1772—1823), բայց Մարքսն աւելի զարգացրեց, պարզեց և գիտական հիմքի վրայ դրեց:

4. Արժէքի փոփոխութիւնները:

Եթէ ապրանքի արժէքը համապատասխանում է բանւորական ժամանակի այն քանակին, որն անհրաժեշտ է նրան պատրաստելու համար, ուրեմն արժէքը պէտք է փոխւի այն ժամանակ, երբ ապրանքների արդիւնաբերութեան եղանակը փոխւում է: Օրինակ. եթէ արդիւնաբերութեան այժմեան եղանակի փոխարէն երևան գայ մի նոր եղանակ, որով յայտնի առարկան կարելի լինէր պատրաստել աւելի կարճ բանւորական ժամանակում, այն ժամանակ համապատասխան չափով պէտք է իջնէ հաս այդ առարկայի արժէքը: Եւ յիրաւի, այդ երևոյթը նկատւում է առօրեայ գործածութեան բազմաթիւ առարկաների վրայ, որոնք առաջ պատրաստւում էին ձեռքով (աշխատանքի ձեռագոր-

ծութեան եղանակով), ծախւում էին աւելի բարձր գնով, քան թէ այժմ, երբ մեքենան սկսեց գործարանում ահազին քանակութեամբ պատրաստել և յայտնի ապրանքի ամեն մի առանձին հատը պատրաստելու համար գործ դնել բանւորական ժամանակի ամենաքիչ (մինիմալ) քանակը: Առանձնապէս շօշափելի օրինակով այդ կարելի է ցոյց տալ գրքերի և լրագիրների պատրաստութեան օրինակով: Մինչև տպագրութեան գիւտը իւրաքանչիւր գիրք սարսափելի թանգ էր նստում, որովհետև նրան պատրաստելու համար գործ էր դրւում արտագործների աշխատանքի շատ օրեր: Իսկ այժմ, շատ չնչին գնով կարելի է ամեն օր ձեռք բերել լրագիրը, մինչև անգամ ծաւալով շատ մեծ, փոքր բրօգիրը, մինչև անգամ ծաւալով շատ մեծ, փոքր բրօշուրի չափ: Ահա ինչու վերև (3 գլ.) մենք առարկեցինք այս խօսքերով. «քաղաքակրթութեան որոշ ընդհանուր յարաբերութիւնների միջոցին», որովհետև կուլտուրայի յառաջագիմութեամբ և մասնաւորապէս տեխնիկայի զարգացմամբ, բանւորական ժամանակը, որ անհրաժեշտ է ապրանքը պատրաստելու համար, քչանում է և դրան համապատասխան էլ իջնում են ապրանքների արժէքները:

5. Բանւորական ուժի արժէքը:

Եթէ բանւորական ուժը կարելի է ծախել և առնել ինչպէս ապրանք, և հետեւապէս ունի ապրանքի բնաւորութիւն, այդ դէպքում նա էլ արժէքի յարաբերութեան մէջ պէտք է հաւասարեցրւած լինի ապրանքների հետ: Հետեւապէս նրա արժէքը (փոխանակական կամ շուկայի արժէքը) կամ միջին գինը, որը վճարւում է նրա փոխարէն գնող-ձեռնարկուն (աշխատավարձ), է նրա փոխարէն գնող-ձեռնարկուն (աշխատավարձ), նոյնպէս պէտք է որոշւի բանւորական ժամանակի այն

քանակով, որն անհրաժեշտ է նրան ստեղծագործելու համար: Իսկ ինչ է նշանակում այս:

Ապրանք-բանւորական ուժը, ինչպէս և ամեն մի ուրիշ ապրանք, գործածելուց ժաշուում կամ փշանում է և յայտնի ժամանակամիջոց անցնելուց յետոյ պէտք է նորից վերականգնւի: Սակայն բանւորական ուժը կենդանի բանւոր-մարդու մի յատկութիւն է: Աշխատանքի գործողութեան մէջ, այսինքն՝ բանւորական ուժի գործածութեան պրօցեսի մէջ, բանւորական ուժը ժաշուում է, ինչպէս մաշուում է առհասարակ մարդկային օրգանիզմը իր գործածութեան պրօցեսում: Ուստի, ամեն մի մարդ պէտք է ժաժանակ առ ժամանակ կերակուր ընդունէ, որպէս զի նորոգէ կամ պահպանէ իր մէջ կեանքը, իսկ բանուոր մարդուն անհրաժեշտ է համապատասխան առատ ու աննդարար սնունդ, որովհետև գործը, աշխատանքը աւելի սաստիկ է ժաշուում նրա կենսական ուժերը, որը նկատելի է անհամեմատ աւելի արագ յոգնածութեան մէջ: Ուրեմն ժաշուած, գործածուած բանւորական ուժը անհրաժեշտ է մշտապէս կրկին նորոգել կամ վերաստեղծել: Ուստի, բանւորը անպայման պէտք է ստանայ կերակրի յայտնի քանակութիւն, բացի դրանից նա կարիք ունի հագուստի, բնակարանի և մի քանի այլ առարկաների, որոնք լուսաւոր երկրներում համարուում են առաջին անհրաժեշտութեան առարկաներ:

Այժմ սրաժիտ և ուշագիւր ընթերցողի համար հեշտ է գուշակել, թէ ինչո՞վ է շափուում ապրանք-բանւորական ուժի արժէքը. նա շափուում է բանւորական ժամանակի այն քանակով, որն անհրաժեշտ է կենսական պիտոյքներ պատրաստելու համար՝ բանւորական ուժը վերականգնելու, վերանորոգելու նպատակով: Ուրեմն, բանւորական ուժի միօրեայ արժէքը համապատասխան է բանւորական ժամանակի այն քանակին, որն անհրա-

ժեշտ է՝ պատրաստելու բանւորի մի օրում գործածելի ընական պիտոյքները, բանւորական ուժի ամսական, տարեկան արժէքը համապատասխանում է բանւորական ժամանակի այն քանակին, որ անհրաժեշտ է պատրաստելու համար կենսական պիտոյքներ, որ գործ է ածում բանւորը մի ամուսյ, մի տարւայ ընթացքում և այլն:

Կարգ զլիսում ասածից հետևում է, որ կուլտուրայի զարգացման և յառաջագիժութեան հետ զուգընթացաբար քշանում է նաև բանւորական ժամանակը, որն անհրաժեշտ է բանւորական ուժը վերականգնելու համար: Օրինակ. եթէ կուլտուրայի նախընթաց ժամանակաշրջանում հարկաւոր է եղել աշխատանքի 9 ժամ, որպէս զի կարելի լինի պատրաստել բանւորի համար ընական պիտոյքներ մի օրւայ համար, աւելի ուշ՝ յետագայ շրջանում նոյն նպատակի համար բաւական կը լինէր աւելի քիչ բանւորական ժամանակ, 6 կամ աւելի քիչ ժամ:

Մեր բոլոր ասածներն այժմ ամփոփենք մի քանի կարճ խօսքերով:

Ապրանքի արժէքն է այն յարաբերութիւնը, որով նա փոխանակուում է բոլոր միւս ապրանքների հետ:

Ձանազան ապրանքների արժէքների մէջ եղած տարբերութիւնները համապատասխանում են ապրանքներ պատրաստելու համար անհրաժեշտ բանւորական ժամանակի քանակի տարբերութիւններին:

Բանւորական ժամանակը կուլտուրայի զանազան շրջաններում փոփոխուում է, ըստ որում կուլտուրայի յառաջագիժութեան հետ քշանում է նաև բանւորական ժամանակը, որ անհրաժեշտ է ապրանքներ պատրաստելու համար:

Բանւորական այն ժամանակը, որ անհրաժեշտ է կենսական պիտոյքներ պատրաստելու բանւորի համար,

որոշում է բանւորական ուժի արժէքը, և կուլտուրայի զարգացման հետ քշանում է բանւորական ժամանակի այն քանակը, որ անհրաժեշտ է բանւորին կենսական պիտոյքները պատրաստելու համար:

6. Փոխանակութիւն.—ծախել եւ առնել:

Ենթադրենք, որ Գրիգորն իր քեռուց ժառանգութիւն է ստացել մի շուժակ, իսկ Արշակը վիճակախաղում տարել է մի որսորդական հրացան: Բայց որովհետև Գրիգորը նուազածու չէ, այլ որսորդ, իսկ Արշակն էլ շուժակահար է և ոչ թէ որսորդ, երկուսն էլ համաձայնում են փոխանակել իրանց իրերը մէկը միւսի հետ: Սակայն կարող է այսպէս էլ պատահել, որ Գրիգորը ծախէ մի ուրիշին իր շուժակը, իսկ Արշակն էլ իր հրացանը և որ առաջինն իր ստացած փողով առնէ հրացան, իսկ երկրորդը՝ շուժակ:

Առաջին դէպքում նրանք երկուսն էլ ապրանքը փոխանակում են ապրանքի հետ անմիջապէս, իսկ երկրորդ դէպքում՝ մի նոր ապրանք, փողը կամ փոխանակութեան ընդհանուր գործին (փոխանակութեան ընդհանուր միջոց) միջնորդի դեր է կատարում:

Մի ուրիշ օրինակ վերցնենք: Ենթադրենք, որ գիւղացի Դաւիթը մի աւելորդ կով ունի, սակայն նա ուզում է ձեռք բերել մի տակառ գինի, և որ մի ուրիշ գիւղացի՝ Միքայէլը—գինեգործ—իր մատանում ունի մի քանի տակառ գինի և ուզում է նրանց ծախել, որ իր համար կով առնէ: Երկուսն էլ կարող են նոյնպէս փոխանակել իրար հետ կամ ուղղակի, անմիջապէս, կամ անուղղակի, նրանք կարող են ուղղակի փոխանակել մէկը միւսի հետ իրանց անհարկաւոր կամ աւելորդ առարկաները կամ փոխել (ծախել) իրանց

արդիւնքները նախ փողի հետ և յետոյ ստացած փողով առնել անհրաժեշտ արդիւնքները:

Այսպիսով տուր և առը ոչ այլ ինչ է, եթէ ոչ անուղղակի փոխանակութիւն:

Փոխանակ ուղղակի փոխանակելու

Ապրանքը ապրանքի հետ

Ա — Ա

Կարելի է փոխանակել նախ՝

Ապրանքը փողի հետ, իսկ յետոյ փողը ապրանքի հետ:

Ա—Փ

Փ—Ա

Այսպիսի փոխանակութեան միջոցին փոխանակութեան մասնակցողներից ոչ ոք չի ստանում ոչ մի շահ կամ օգուտ, այսինքն արժէքի ոչ մի յաւելումն: Նրանք փոխադարձաբար փոխանակում են հաւասար արժէք ունեցող իրերը: Եթէ այդ իրերը հաւասար արժէք չունենային, այն ժամանակ փոխանակութեան մասնակցողներից մէկն ու մէկը կը պահանջէր աւելորդ արժէքի համար ապրանք կամ փող իրեր և վարձատրութիւն:

Սակայն ինչո՞ւ նրանք փոխանակեցին: Որովհետև իւրաքանչիւրն ունէր մի իր, որ իրեն հարկաւոր չէր և չունէր հարկաւոր իրը: Այս դէպքում փոխանակութեան գործողութիւնը կատարուեց ոչ թէ նրա համար, որ այս կամ այն առարկայի արժէքը մեծացնւի այլ միայն նրա համար, որ փոխանակութեան ամեն մի մասնակցողի պահանջներին բաւարարութիւն տրուի: Ուստի կարելի է ասել, որ այստեղ փոխանակութիւն եղաւ գործածական կամ փոխանակական արժէքի համար:

7. Առ ու ծախս:

Այժմ ենթադրենք, որ պ. Պետրոսեանցը, ցան-

կանում է «գործ» սկսել հօրից ստացած կապիտալով-
ասենք, թէ նա այդ նկատումներով հիմնել է մանածի
գործարան և իրեն իբրև օգնական վարձել է երկու
կառավարիչ (դիրեկտոր) տեխնիքական ու առևտրա-
կան մասերի համար. որոնք ամբողջ ձեռնարկութիւնը
սարքել՝ կարգաւորելուց յետոյ, կառավարում են, առ-
նելով բամբակ, վարձելով բանւորներ և այլն: Յետոյ
ենթադրենք, որ այդ գործարանում բամբակը մանում
են և այդ մանածը շուկայում վաճառքի է հանում վա-
ճառական կառավարիչը շրջուն գործակալների օգնու-
թեամբ:

Ընթերցողն իսկոյն կը նկատէ, թէ ինչո՞վ է տար-
բերում այս դէպքում կատարող փոխանակութիւնը
այն փոխանակութիւնից, որը ներկայացրինք 6-րդ
գլխում: Մեր պ. Պետրոսեանցը ապրանքը չփոխանա-
կեց ապրանքի հետ փողի միջոցով, ընդհակառակը, իր
ձեռքի տակ եղած փողը նա ծախսեց ապրանքներ առ-
նելու համար (գործարանը գոյքի հետ, բամբակ, ծառա-
յողների բանւորական ուժը) և ապա ծախսեց էլի ապ-
րանք, որպէս զի այդ ապրանքը նորից փող շինէ: Ու-
րեմն, փոխանակութեան բանաձևն այս դէպքում ոչ
թէ է

Ա — Փ — Ա, այլ
փող—ապրանք—փող,
Փ — Ա — Փ

այսինքն, փողը դառնում է ապրանք, իսկ յետոյ ապ-
րանքը կրկին դառնում է փող: Իսկ այդ ինչո՞ւ համար
է այդպէս լինում:

Փոխանակութեան այն դրդիչը (մօտիւ), որի վրայ
մենք վերև մատնացրոյց արինք (անհարկաւոր իրը տըր-
ւում էր՝ փոխարէնը հարկաւոր իր ստանալու համար),
ներկայ դէպքում բացակայում է, որովհետև այստեղ
ապրանքը չէ, որ փոխանակում է ապրանքի հետ

փողի միջոցով, այլ, ընդհակառակը, փողն է, որ փոխ-
նակում է փողի հետ ապրանքի միջոցով: Ուրեմն, մեր
պ. Պետրոսեանը, ունենալով փող, դարձեալ ձեռք է
բերում փող: Սակայն ինչո՞ւ է նա փոխանակութեան
այդ գործողութիւնը կատարում:—Հարկաւ, ոչ նրա
համար, որ իր փողը շրջանառութեան մէջ դնէ միայն,
այլ նրա համար, որ ձեռք բերէ շահ կամ օգուտ. նա
ուզում է ստանալ յաւելեալ արժէք: Ուստի, պ. Պետ-
րոսեանի դրամարկը կրկին յետ պիտի մտնէ աւելի
փող, քան թէ դուրս է եկել նրանից, կամ շրջանա-
ռութեան վերջը աւելի պէտք է փող ստացւի, քան
թէ սկզբումն էր: Հակառակ դէպքում մեր պ. Պետրո-
սեանը յիմարներին մէկը կը լինէր, մանաւանդ որ
փողը, փոխանակ նա իր մօտ պահարանում անկորուստ
պահելու, շրջանառութեան մէջ է դնում և գրանով
վտանգի է ենթարկում կորցնելու իր կապիտալի առ-
նուագն մի մասը: Սակայն մեր պ. Պետրոսեանը, ինչ-
պէս և առհասարակ ամեն մի կապիտալիստ, չի ցան-
կանում իր փողը պահարանում պահել, իբրև մի մե-
ռած, կրաւորական գանձ. նա փողը շրջանառութեան
մէջ է թողնում, իբրև «կապիտալ», ըստ որում կապի-
տալ խօսքով հասկանում ենք այն փողը (կամ ուրիշ
արժէքներ), որն ինքն իրան աւելանում է, աճում է:
Կապիտալը իր տեսակի մի թուխս է, որը ճտեր է հա-
նում, այս ճտերը իրանց հերթին հանում են ուրիշ ճտեր
և այլն: Կապիտալիստը ցանկանում է և պարտաւոր է
ձեռք բերել յաւելեալ արժէք: Շրջանառութեան վերջին
նրա փողը պէտք է բերէ աճումն, այլապէս կապիտա-
լիստի ամբողջ գործը կը լինէր մի անհեթեթ բան: Փոր-
ձըն էլ հաստատում է անվիճելի-տրամաբանական այդ
դատողութիւնը: Արդիւնագործական և առևտրական
կապիտալները անվերջ աճում են՝ յառաջուութեամբ

հարստացնելով կապիտալի տէրերին: «Ուժ տրւած է նրան դեռ էլի կաւելցել»:

8. Պրորբլիւս

Սակայն սրտեղից է ստացւում այդ յաւելեալ արժէքը: Այս հարցի վրայ շատ տնտեսագէտներ են գըլուելս կոտրել, բայց ապարդիւն. այս հարցի լուծումը այնուամենայնիւ նրանց չի աջողւել:

Ինչպէս ասացինք 2-րդ գլխում, ապրանքային արժէքը կանոնաւորւում է սօցիոլօգիկական օրէնքներով, որոնք բնական օրէնքների նման իրական ու պարտադիր են: Ապրանքներ առնողը կամայ-ակամայ պէտք է վճարէ ըստ արժէքի, այսինքն պէտք է վճարէ նրանց փոխարէն էկվիվալենտ, հաւասար ապրանք կամ ապրանքով կամ փողով: Դրա համար էլ, երբ կապիտալիստն առնում է հում նիւթ, աշխատանքի գործիքներ և բանւորական ուժ, նա պէտք է վճարէ նըրանց փոխարէն ըստ նրանց իսկական արժէքի, իսկ երբ նա ծախում է իր արդիւնքները, նա ստանում է նոյնպէս այնքան փող, որքան իր վրայ նստել են հում նիւթը, բանւորական ուժը ու աշխատանքի գործիքների մաշւելու կորուստը:

Օրինակի համար վերցնենք նոյն մանածի գործարանը: Ենթադրենք, որ աշխատաւորը 6 ժամւայ ընթացքում մշակում է (մանում է) 10 գրվանքայ բամբակ: Այդ 10 գր. մանածի մէջ պարունակւում են բացի աշխատանքի 6 ժամից, նոյնպէս և աշխատանքի գործիքների մաշւած մասը. որը մենք «իլիկներ» խօսքի տակ կը գնենք: Ենթադրենք, որ 1 գրվ. բամբակն արժէ 1 մարկ. իսկ մանածի 1 գրվ. $1\frac{1}{2}$ մարկ, որ իլիկները մաշւում են 10 գրվ. բամբակի մշակութեան միջոցին 2 մարկի և որ աշխատավարձը հաւասար է 3 մարկի: Այսպիսով ամբողջ ծախսը կը լինի՝

10 գրվ. բամբակ	10 մարկ
իլիկներ	2 մարկ
աշխատավարձ	3 մարկ
	<hr/>
	15 մարկ

Իսկ մուտքը կը լինի՝

10 գրվ. մանած $1\frac{1}{2}$ մարկով— 15 մարկ: Ուրեմն այս դէպքում մուտքը հաւասար է ծախքին: Իսկ սրտեղից է ստացւում յաւելեալ արժէքը:

9. Պրորբլիւսի լուծումը:

5-րդ գլխում մենք ասացինք, որ քաղաքակրթութեան անդրագոյն յառաջադիմութեամբ կը հարկաւորւի 6 կամ աւելի պակաս ժամ բանւորական՝ օր, որպէս զի աշխատաւորի միօրեայ բանւորական ուժը վերականգնւի: Ենթադրենք՝ բանւորական օրը հաւասար է 6 ժամի: Եթէ 6 ժամը բաւական է՝ աշխատաւորի միօրեայ կենսական պիտոյքները արդիւնաբերելու համար, այն ժամանակ, ուրեմն, աշխատավարձի մէջ պարունակւում է բանւորական ժամանակի միայն 6 ժամի էկվիվալէնտը:

Ուրիշ խօսքով, աշխատավարձը, համաձայն արժէքի օրէնքին, այս դէպքում հաւասար կը լինի այն վարձի կէսին, որ կստացւէր, եթէ հարկաւոր լինէր 12 ժամ բանւորի կենսական միջոցները պատրաստելու մի օրւայ համար:

Հետևապէս, ձեռնարկուն, որն առել է ապրանք—բանւորական ուժը, նոյնպէս յետ կստանայ աշխատավարձի լրիւ արժէքը (էկվիվալէնտ), եթէ բանւորը բանում է 6 ժամ: Դրա համար էլ նա բանւորին պէտք է ազատ թողնէ օրւայ ֆնացած ժամանակը, կամ պէտք է նրան վճարէ առանձին վարձ աւելորդ բանած ժամերի համար: Սակայն ձեռնարկուն, ինչպէս և ձեռնարկունների դասակարգը, աշխատում է հնար եղածին



չափ երկարացնել բանւորական օրը, չմտածելով բանւորներին վարձատրել առանձին վճարով՝ աւելորդ աշխատանքի համար: Դառնալով մեր առաջւայ օրինակին և ընդունելով բանւորական օրը 12 ժամ, մենք ստանում ենք՝

Կապիտալիստի ծախսերը՝

առաջին 6 ժամ աշխատանքի համար

(ինչպէս վերև տեսցինք)	
10 գրվանքայ բամբակ	10 մարկ
իլիկներ	2 —
Աշխատավարձ	3 —
Միւս 6 ժամ աշխատանքի համար՝	
10 գրվ. բամբակ	10 մարկ
իլիկներ	2 —
Աշխատավարձ	— —
զուամար	27 —

Կապիտալիստի մուտքը, 20 գրվ. մանած 1¹/₂ մարկով 30 մարկ: Հետևապէս ամեն օր իւրաքանչիւր բանւորից կապիտալիստը 3 մարկ օգուտ է ստանում. այսինքն ճիշտ այնքան, որքան կազմում է հետևեալ միւս 6 աւելորդ ժամի չվճարւած աշխատավարձը:

Ուրեմն, յաւելեալ արժէքը կազմում է չվարձատրւած բանւորական ժամանակից, յատկապէս այն ժամերից, որ բանւորն աշխատում է ձրի, բացի ժամերի այն քանակից, որն անհրաժեշտ է կուլտուրայի ներկայ յարաբերութիւնների միջոցին բանւորի միօրեայ կենսական միջոցները պատրաստելու համար:

Մենք տեսնում ենք, որ կապիտալիստը, չխախտելով երբէք արժէքի ընդհանուր օրէնքը, ստանում է յաւելեալ արժէք. նա վճարում է բանւորական ուժի համար ըստ նրա ապրանքային արժէքի, բայց և այնպէս վարձատրում է բանւորի աշխատանքը նրա ար-

ժէքից պակասով: Իսկ այդ առաջ է գալիս նրանից, որ բանւորական ուժը բոլորովին մի առանձին տեսակի ապրանք է: Մնացած ապրանքները գործ ածելուց ոչ մի նորը չի ստեղծուում, չի վերարտադրուում, իսկ բանւորական ուժի գործածութիւնը բնորոշում է յատկապէս նոր ապրանքների ստեղծագործութեամբ: Միւս ապրանքների փոխանակական արժէքները բոլորովին ոչնչանում են գործածելուց, ընդհակառակը, բանւորական ուժը, իբրև ապրանք, պիտանի է նաև անդրագոյն գործածութեան համար, թէև նա գործածւած լինի իր փոխանակական արժէքի չափով: Եւ որովհետև բանւորական ուժի արժէքը առաձգական է և անկայուն, այսինքն՝ կուլտուրայի յառաջադիմութեան հետ քշանում է, բանւորական ուժի արդիւնաւէտութիւնը մնալով անփոփոխ, այնպէս որ բանւորը կարող է բանել 12 ժամ և աւելի, թէ և նրա բանւորական միօրեայ ուժերը վերականգնելու համար բաւական լինէր 6 ժամ և աւելի պակաս, ուստի և բանւորական ուժն առնողը (կապիտալիստը) ստանում է յաւելեալ արժէք, թէ և չվճարում և նրա ապրանքային արժէքը լրիւ:

Մի քանի կարճ խօսքերով խնդրի լուծուածը կարելի է ձևակերպել այսպէս:—

Յաւելեալ արժէքը կազմում է այն տարբերութիւնից, որ կայ բանւորական ուժի գործածութեան և փոխանակական արժէքների մէջ:

10. Եզրակացութիւն:

Յոյս ունիմ, որ նախընթաց ասածներս պարզեցին մարքսեան արժէքի տեսութեան էութիւնը: Այդ ասածներիցս հետևում են հետևեալ ընդհանուր եզրափակումները:—

Բնական զրուծեան մէջ մարդս ստիպւած է իր բոլոր բանւորական ուժը գործադրել, որպէս զի պահպանէ իր գոյութիւնը, ձեռք բերէ անհրաժեշտ միջոցներ և ապահովէ իրան վնասակար տարրերից: Սակայն քաղաքակրթութեան սկսելովը և անդրագոյն առաջադիմելովը (աշխատանքի միացում և բաժանում, հողերի մաքրելը, գիւտեր, աշխատանքի գործիքների կատարելագործութիւն, մտքի զարգացում, բնութեան և նրա ուժերի ճանաչելը) մարդուն ստիպում են հետզհետէ աւելի պակաս բանւորական ժամանակ ծախսելու իր ամենամահրաժեշտ պահանջներին բաւարարութիւն տալու համար: Ուստի և նա օգտուում է որոշ ազատ ժամանակից և կարող է բանւորական ուժը գործադրել կեանքի յարմարութիւններ ձեռք բերելու վրայ: Սակայն վարձու աշխատանքի սխտեմի երևան գալովը կուլտուրայի այդ առաւելութիւնը դառնում է բաժին միայն այնպիսի անձանց, որոնք տէր են կապիտալի, մինչդեռ բանւորը, համարեա ինչպէս նախագոյ մարդավայրենին, ստիպւած է վատնելու իր ամբողջ բանւորական ուժը, որ գոնէ մի կէրպ պահպանէ իր գոյութիւնը, որովհետև աշխատավարձը, մինչև անգամ երկարատև բանւորական օր եղած ժամանակն էլ, կանգնած է միշտ ամենացած մակերևոյթի վրայ standart of life-ի:



Ap
2-1991a

Լոյս տեսաւ «Կեանք»-ի Գրադարանից

1. ՎՕԴՕՎՕԶՕՎ.—Ընդհանուր ընտրողական իրաւունքը Արևմտքում. թարգ. Կ. Միքայէլ-Կանցի. գինը՝ 10 կ.
2. Բ. ԻՇԽԱՆԵԱՆ.—Տնտեսական զարգացման ֆազերը. գինը՝ 15 կ.
3. ԿԱՈՒՑԿԻ.—Աւտորիայի ճգնաժամը (Լեզու և ազգ). թարգմ. Ա. Ս. Յաւելուած՝ օտար խօսքերի բառաթերթ. գինը՝ 7 կ.
4. ԶԷՅԴԷԼ.—Նօրմալ բանւորական օր. թարգ. Մ. Եսայեանի. գինը՝ 5 կ.
5. Ի. ՇՏԷՐՆ.—Մարքսի յաւելեալ արժէքի թէօրիան. թարգ. ռուս. Ս. Ղ. գինը՝ 5 կ.

Տպագրութեան և յանձնւում և շուտով լոյս կտեսնեն.

1. Կ. ՄԱՐՓՍ ԵՒ Ֆ. ԷՆԳԵԼՍ.—Վոյնիստական մանիֆեստը:
2. ՎՕԶՆԻՍԷՆՍԿԻ.—Պօրֆեսիօնալ միութիւններ,
3. ԼԻԲԿՆԵՆՏ.—Մեր նպատակները:
4. Նոյնը.—Երկու աշխարհ:
5. ԲԷԲԵԼ.—Քրիստոնէութիւն և Սօցիալիզմ:

Թարգմանւած տպագրութեան համար և պատրաստւում են

1. ԿԱՈՒՑԿԻ.—Էրֆորտի ծրագիրը
2. ԳԵԴ.—Կօլլեկտիվիզմ:
3. Կ. ԿԱՈՒՑԿԻ.—Դասակարգային շահերը:

Դիմել՝ Թիֆլ. «ԿԵԱՆՔ»-ի խմբագրատունը. «Կենտրոնական», «Գուտտենբերգ» և Թառայեան գրավաճառանոցներին, իսկ միւս քաղաքներում սեղական գրավաճառանոցներին:

«Ազգային գրադարան»

NL0192678

